Բայանդուր

Բայանդուր բնակավայրի վարչական տարածքը կազմում է 1143.0հա, բնակչությունը 717 մարդ: Բնակավայրը ծովի մակարդակից բարձր է՝ 1539մ: Գյուղին Բայանդուր անունը տվել են ի պատիվ Բայանդուր իշխանի: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տնական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գյուղատնտեսական հողատարածքները ոռոգվում են Ախուրյան գետի ջրերով՝ ջրհան կայանի միջոցով: Մասնագիտացված ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են պտղաբուծությամբ հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Բնակավայրն համարվու է սահմանամերձ: Գյուղում գործում է դպրոցը, ակումբը, գրադարանը, կառուցվում է մանկապարտեզի շենքը: